ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱԼԱՆՍ ՔԱՂԱՔՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՅ ՎԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱԽՄԲԻ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏՈՒՄ

Հարգելի պարոն Պարակյան, տիկնայք եւ պարոնայք, թույլ տվեք ողջունել Ձեզ, ցանկանալ արգասաբեր աշխատանք:

Արդեն մեր տաղավարի թեմատիկ անվանումը խոսում է այն բանի մասին, թե ինչքան կարեւոր է տեղական տնտեսության զարգացումը ցանկացած երկրի համար: Ինչքան զարգացած է համայնքը, այնքան զարգացած է մարզը եւ երկիրը:

Մեր աշխատանքի համար շատ կարեւոր են առաջադրված առանցքային ուղղությունները՝

1. ինչ հանրային քաղաքականություն է իրականացվում համայնքների կողմից տեղական տնտեսության զարգացմանը նպաստելու համար,
2. տնտեսական կառավարման ինչ գործիքներ են օգտագործվում համայնքների գործունեությանը պատասխանելու համար, ինչպես անել համայնքի տարածքը ավելի գրավիչ դարձնելու համար,
3. Ինչ հնարավորություններ եւ նորարարական փորձ կարելի է տրամադրել ի շահ բնակչության:

Հայաստանի համայնքների միությունը, ՀՀ տարածքային կառավարման նախարարությունը լուրջ նախապատրաստական աշխատանք կատարեցին այս համաժողովի կազմակերպման եւ անցկացման համար, սերտորեն աշխատելով ֆրանսիայի մեր գործընկերների հետ: Կազմված չորս աշխատախմբերից մեկը՝ «Տեղական տնտեսություն» թեմատիկ աշխատանքային խումբն է, որի կազմում են հայկական կողմից Լոռու մարզպետարանը եւ Արթիկի քաղաքապետարանը (պատասխանատուներ), Երեւանի Գյումրիի, Արտաշատի եւ Արմավիրի քաղաքապետարանները:

Հուսով ենք, որ քննարկումների արդյունքում կառաջարկվեն նոր մոտեցումներ եւ առաջարկություններ:

Համայնքները տեղական տնտեսության զարգացման համար պետք է կարողանան իրենց տարածքը գրավիչ եւ մրցունակ դարձնել, վարելով այնպիսի քաղաքականություն, որպեսզի ներդնողները համոզված լինեն անվտանգ եւ փոխշահավետ գործունեություն ծավալելու:

Տնտեսության զարգացման ծրագրերում պետք է հաշվի առնվեն տեղական ռեսուրսները, մարդկային ներուժը, պետք է մշակվեն առաջարկությունների փաթեթներ եւ ծրագրեր, եւ պատրաստ լինեն այն ներկայացնելու ցանկացած ներդրողի:

Հրավիրում եմ գործարար աշխարհի մարդկանց Լոռու մարզ, հավատացած եղեք, որ Ձեզ համար կստեղծվեն բոլոր շահավետ պայմանները:

Շնորհակալություն ուշադրության համար: